Հաստատում եմ

ՀՊՄՀ ռեկտոր՝ ——————————— Ս.Գևորգյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

ԲԱԿԱԼԱՎՐԻ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՄՆԱԳԻՐ

Կրթական ծրագրի մասնագիրը (ԿԾ), նախատեսված է դիմորդների, ուսանողների, ակադեմիական անձնակազմի, շահեկիրների և գործատուների համար: Այն տրամադրում է ծրագրի հիմնական հատկանիշների համառոտ ամփոփումը՝ իր մեջ ներառելով ուսումնառության նախատեսվող արդյունքները, մանրամասն տեղեկություններ ուսուցման, դասավանդման և գնահատման մեթոդների, ուսումնառության արդյունքների և յուրաքանչյուր մոդուլի բովանդակության մասին, որն ակնկալում է ողջամիտ ուսանողը և որին կարող է հասնել, եթե նա լիարժեքորեն օգտվում է իրեն առաջարկվող և տրամադրվող ուսումնական հնարավորություններից:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ
ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

1. **Կրթական ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը**	Մաթեմատիկա 011401.05.6
2. **Որակավորումների ազգային շրջանակի մակարդակ**	Որակավորումների ազգային շրջանակի 6-րդ մակարդակ
3. **Շնորհվող որակավորումը**	մանկավարժության բակալավր
4. **Կրեդիտների քանակը**	240 (երկու հարյուր քառասուն)
5. **Բարձրագույն ուսումնական հաստատություն**	ՀՊՄՀ
6. **Կրթական ծրագիրը իրականացնող ֆակուլտետ**	Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի
7. **Կրթական ծրագրի հիմնական սպասարկող ամբիոն(ներ)**	Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի
8. **Կրթական ծրագրի ուսուցման լեզու**	Հայերեն
9. **Կրթական ծրագրի ուսուցման ձևը**	Առկա/հեռակա
10. **Կրթական ծրագիրը հավատար մագրված/լիցենզավորված է՝**	Լիցենզավորված է ՀՀ ԿԳՆ-ի կողմից

11. Կրթական ծրագրի ընդունելության չափանիշները (մուտքի պայմաններ):

Ծրագրի դիմորդը պետք է ունենա միջնակարգ, կամ նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության վկայական:
Ընդունելությունը կատարվում է ըստ ՀՀ կառավարության հաստատած Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի:

12. Կրթական ծրագրի կառուցվածքը և նկարագիրը

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆ ՈՒՆԻ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ (ՀՍՏ)՝ ԱՌԿԱ՝ 42 ԿՐԵԴԻՏ, ՀԵՌԱԿԱ՝ 38 ԿՐԵԴԻՏ

Պարտադիր դասընթացներ՝ առկա 38 կրեդիտ, հեռակա՝ 34 կրեդիտ
Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը:

Կամընտրական դասընթացներ՝ առկա 4 կրեդիտ, հեռակա՝ 4 կրեդիտ
Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ ուսանողի կողմից ընտրելու հնարավորությամբ դասընթացներ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ՝ ԱՌԿԱ 8 ԿՐԵԴԻՏ, ՀԵՌԱԿԱ՝ 8 ԿՐԵԴԻՏ

Պարտադիր դասընթացներ՝ առկա 8 կրեդիտ, հեռակա 8 կրեդիտ
Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են ընդհանուր մաթեմատկական և բնագիտական գիտելիքների մասնագիտական հենքի ձևավորմանը:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ՝ ԱՌԿԱ 16 ԿՐԵԴԻՏ, ՀԵՌԱԿԱ 16 ԿՐԵԴԻՏ

Պարտադիր դասընթացներ՝ առկա 14 կրեդիտ, հեռակա 14 կրեդիտ
Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են ընդհանուր մանկավարժական և հոգեբանական գիտելիքների մասնագիտական հենքի ձևավորմանը:

Կամընտրական դասընթացներ՝ առկա 2 կրեդիտ, հեռակա 2 կրեդիտ
Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ ուսանողի կողմից ընտրելու հնարավորությամբ դասընթացներ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ՝ ԱՌԿԱ 144 ԿՐԵԴԻՏ, ՀԵՌԱԿԱ՝ 144 ԿՐԵԴԻՏ
Ապահովում են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ և ամբողջական ընկալումը:

Պարտադիր դասընթացներ՝ առկա 138 կրեդիտ, հեռակա 138 կրեդիտ
Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մասնագիտական պարտադիր դասընթացներ:

Կամընտրական դասընթացներ՝ առկա 6 կրեդիտ, հեռակա 6 կրեդիտ
Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ ուսանողի կողմից ընտրելու հնարավորությամբ կամընտրական մասնագիտական դասընթացներ:

ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՄՈԴՈՒԼՆԵՐ՝ ԱՌԿԱ 30 ԿՐԵԴԻՏ, ՀԵՌԱԿԱ 34 ԿՐԵԴԻՏ

Կուրսային աշխատանք՝ առկա 4 կրեդիտ, հեռակա 4 կրեդիտ
Ծրագրի այս հատվածում նախատեսվում է 2-ական կրեդիտ աշխատածավալով 2 կուրսային աշխատանքի կատարում
Ուսումնական պրակտիկա 0 կրեդիտ
Մանկավարժական պրակտիկա՝ առկա 18 կրեդիտ, հեռակա 18 կրեդիտ
Նախատեսում է բազմամասնագիտական թիմում մասնագիտական գործունեության ուսումնասիրում, որի նպատակն է բակալավրերի հոգեբանամանկավարժական փորձի ձեռքբերումը:
Ամփոփիչ ավարտական որակավորման քննության նախապատրաստում՝ առկա 2 կրեդիտ, հեռակա 4 կրեդիտ
Ամփոփիչ ավարտական որակավորման քննություն՝ առկա 6 կրեդիտ, հեռակա՝ 8
Կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որի նպատակն է տեսական և գործնական մասնագիտական գիտելիքների,կարողությունների և հմտությունների ստուգումը ըստ կրթական ծրագրի վերջնարդյունքների:

13. Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակն է.

- պատրաստել Մաթեմատիկա բնագավառի դպրոցական առարկաների դասավանդող բարձրակարգ ուսուցիչներ հիմնական և ավագ դպրոցների համար,
- ուսանողներին տրամադրել մաթեմատիկայից հիմնարար տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ՝ ապագա մասնագիտական գործունեության համար,
- խթանել ուսանողների ինքնուրույն, քննադատարական, ստեղծագործական, տրամաբանական մտածողությունը՝ գործնական առաջադրանքների, նախագծային աշխատանքների, ինչպես նաև ուսումնառության հետագա շարունակականության ապահովման համար:

14. Ծրագրի կրթական ելքային արդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի՝
Ա1. Ներկայացնել ՀՀ կրթության քաղաքականությունը, կրթության բնագավառի օրենսդրությունը, նորմատիվային և իրավական ակտերը, կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերը (կրթական չափորոշիչներ, ուսումնական պլաններ և ծրագրեր):
Ա2. Ներկայացնել անձին որպես մանկավարժական գործընթացի սուբյեկտ, նրա հոգեբանամանկավարժական, տարիքային-անհատական առանձնահատկությունները, սոցիալականացման օրինաչափությունները, այդ գործընթացի վրա ազդող ներքին (հոգեբանական) և արտաքին (ազգային, համամարդկային, սոցիալ- մշակութային, տնտեսական) գործոնները:
Ա3. Քննարկել հանրակրթական դպրոցում «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկաների բովանդակությունը և դրանց առանձնահատկությունները:
Ա4. Մեկնաբանել հանրակրթական դպրոցում «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկաների դասավանդման մեթոդաբանական առանձնահատկությունները:
Ա5. Ձևակերպել, մեկնաբանել մանկավարժի մասնագիտության հիմնական բովանդակությունը, նպատակները, գործառույթները և այլ կառույցների հետ համագործակցության բովանդակությունը ու իրականացման ուղիները:
Ա6. Հաղորդել և ձևավորել մասնագիտական այնպիսի գիտելիքներ և կարողություններ, որոնք անհրաժեշտ են հարակից առարկաների ուսումնասիրման, հեռավար կրթության կազմակերպման և իրականացման համար:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի՝
Բ1. Կիրառել մանկավարժության ոլորտի հիմնարար սկզբունքները և մեթոդները մաթեմատիկայի ուսուցչի գործունեության ընթացքում:
Բ2. Կիրառել ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ, ուսուցման արդյունավետ ռազմավարություններ և մեթոդներ՝ կազմակերպելով մանկավարժական գործընթաց համընդհանուր ներառականության պայմաններում:
Բ3. Օգտվել տարատեսակ տեղեկատվական աղբյուրներից (գրադարաններ, համացանցային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ) և ՏՀՏ տեխնոլոգիաներից՝ դրսևորելով դրանցից օգտվելու ունակություններ, տեղեկատվական գրագիտություն (որոնել, ընտրել և մշակել անհրաժեշտ տեղեկատվություն) և մասնագիտական գործունեությունն արդյունավետ պլանավորելու, իրականացնելու և գնահատելու կարողություն:
Բ4. Մասնագիտական խնդիրներ լուծելիս վերլուծել և համադրել տեսական գիտելիքներն ու գործնական կարողությունները, իրականացնել ինքնուրույն, հետազոտական և նախագծային աշխատանքներ, ինչպես նաև ուսուցման գործընթացում դրանց կիրառման ժամանակակից տեխնոլոգիաներ:
Բ5. Կազմակերպել մանկավարժական գործընթաց՝ իրականացնելով որակական և քանակական հետազոտություններ, գնահատում դրանց արդյունքները կրթության կազմակերպման տարբեր ձևերում:
Բ6. Գնահատել սեփական մասնագիտական գործունեության առաջընթացը՝ ցուցաբերելով քննական մոտեցում և պլանավորելու հետագա զարգացումը:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի՝
Գ1. Կառուցել գրավոր և բանավոր խոսքը (մայրենի և օտար լեզվով)՝ դրսևորելով հոգեբանամանկավարժական պատշաճ գրագիտություն:
Գ2. Պլանավորել, կազմակերպել գիտամեթոդական հետազոտություններ, վերլուծել և գնահատել դրանց արդյունքները, ցուցաբերել անհրաժեշտ ինքնուրույնություն և պատասխանատվություն մասնագիտական որոշումներ կայացնելիս:
Գ3. Կրել պատասխանատվություն սեփական անձի առողջության, ազգային և համամարդկային արժեքների պահպանման և ներկայացման համար:
Գ4. Զարգացնել մասնագիտական կոմպետենցիաները՝ ժամանակակից հասարակության կրթական պահանջմունքների, աշխատաշուկայի պահանջների, սոցիալ-տնտեսական և գիտամշակութային զարգացումներին համընթաց և պատասխանատու կերպով կիրառել սեփական գիտելիքները տարբեր ոլորտներում և ցուցաբերել նախաձեռնություն, կառավարման կարողություններ ու գործառույթներ (պլանավորում, կազմակերպում, ղեկավարում, վերահսկում)՝ դրսևորելով ստեղծագործական մոտեցում տարբեր մարտահրավերների ժամանակ:

15. Գնահատման մեթոդներ

«Մաթեմատիկա» մասնագիտության կրթական ծրագրի շրջանակներում կիրառվող գնահատման մեթոդաբանությունը հիմնվում է ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների օբյեկտիվության և չափելիության վրա՝ փաստող-արձանագրող, ուղղորդող և խրախուսող գործառույթներով: Գնահատվում են ուսանողի՝ ա. գիտելիքը, բ. ունակություններն ու կարողությունները, գ. ինքնուրույնությունը և ակտիվությունը: Ուսանողի անհատական մասնագիտական աճը օբյեկտիվ դիտարկելու նպատակով գնահատման կարգը դիտարկում է նախնական (սկզբնական) վիճակը և վերջնական (ելքային) արդյունքը:
Դասընթացների գնահատման մեթոդներից են՝
1. տեսական դասընթացների պարագայում՝ գրավոր, ստուգողական աշխատանքներ, միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն, ինքնուրույն նախագծեր, ռեֆերատներ, հաշվետվություններ, էսսեներ (խոհագրություններ) և բանավոր և գրավոր ներկայացումներ (պրեզենտացիաներ),
2. գործնական դասընթացների պարագայում՝ գրավոր, միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն, ինքնուրույն նախագծեր, լաբորատոր աշխատանքներ, գործնական խնդիրների լուծումներ, հարցումներ և հարցազրույցներ, էսսեներ և բանավոր և գրավոր պրեզենտացիաներ,
3. մանկավարժական պրակտիկայի պարագայում՝ թղթապանակ, հաշվետվություն, էսսեներ և բանավոր և գրավոր պրեզենտացիաներ:
Հետազոտական աշխատանքների (կուրսային աշխատանք, հաշվետվություն, ավարտական թեզ) գնահատումն իրականացվում է առանձին՝ հանձնաժողովի կողմից՝ նախապես սահմանված գնահատման կարգի համաձայն:
Գնահատման ընթացքում կիրառվում է տառային և վարկանիշային գնահատում (100 միավոր), համաձայն յուրաքանչյուր առարկայի գնահատման համար ընտրված բաղադրիչների:
Գնահատման մանրամասները տես՝ ՀՊՄՀ ուսանողների գիտելիքների գնահատման կարգում: http://aspu.am/

16. Ուսուցման և դասավանդման մոտեցումներ

Ուսուցումն իրականացվում է խմբային և հոսքային ձևաչափերով, իսկ սեմինար, գործնական, հետազոտական աշխատանքները և պրակտիկան ներառված են փոքրաթիվ ենթախմբերում: Դասավանդման մեթոդները կառուցված են ուսանողակենտրոն մոտեցմամբ՝ ուսուցման բոլոր փուլերում՝ խրախուսելով ուսանողի անհատական զարգացումը, մասնագիտական կարողությունների համաչափ աճը, մասնագիտական տեղեկատվության ձեռքբերման հարցում վերջինիս ինքնուրույնությունը, ինչպես նաև անհատական վերլուծական ունակությունները և քննադատական մտածողությունը: Ուսուցման և դասավանդման մոտեցումներն ապահովում են գիտելիքների աստիճանական ավանդում՝ ըստ բարդության, ինչպես նաև հմտությունների և կարողությունների անընդմեջ զարգացում՝ ըստ մասնագիտական կայացման հիմնական պահանջների:
Դասավանդումն իր մեջ ներառում է դասախոսություններ, սեմինարներ, գործնական, լաբորատոր պարապմունքներ, խորհրդատվություն և գործնական դասընթացներ:
Դասախոսություններ – ընդլայնված և համահունչ փաստերի հաջորդականության ներկայացման հնարավորություն,
Սեմինարներ – խմբային և անհատական ստեղծագործականի, քննարկումների և անդրադարձի թողարկում, քննադատական մտածողության զարգացում,
Գործնական պարապմունքներ – փորձարարության և թեմայի, փաստաթղթերի և նյութերի վերլուծության և քննարկման հնարավորություն, խնդիրների լուծում
Լաբորատոր աշխատանք –լաբորատորիաներում գործնական խնդիրների նախագծում, մշակում և իրականացում՝ սարքավորումների և համակարգիչների միջոցով:
Աջակցվող ինքնուրույն ուսում՝ ընթացիկ նյութերի օգտագործմամբ – Անհատական հետազոտության և զարգացման աջակցում,
Անհատական խորհրդատվություն – Ինքնուրույն ուսման ավելի ընդլայնված, խոր վերլուծության և աջակցության հնարավորության տրամադրում:

17. Ուսումնական պլանի քարտեզը

Տես կցված հավելված 3

18. Մասնագիտական գործունեության ոլորտներ

Մաթեմատիկա մասնագիտությամբ բակալավրիատն ավարտելուց հետո կարող է աշխատել հետևյալ բնագավառներում՝

- կրթական հաստատություններում (հանրակրթական դպրոց, միջին մասնագիտական հաստատություն, քոլեջ)՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ,
- հանրակրթական դպրոցներում՝ որպես ուսուցչի օգնական,
- զարգացման կենտրոններում՝ որպես խմբակների ղեկավարներ:

19. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

Կրթական ծրագրերի մշակման համար որպես արտաքին կողմնորոշիչներ ծառայել են հետևյալ աղբյուրները՝

- ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքի պահանջները:
- Բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչները:
- Հարատև ուսումնառության որակավորումների եվրոպական շրջանակը:
- Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակավորումների շրջանակը (դուբլինյան նկարագրիչները):
- ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակը:
- ՀՀ-ում մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրման չափանիշները և չափորոշիչները:
- Արտասահմանյան առաջավոր համալսարանների համանման կրթական ծրագրերը

20. «Մաթեմատիկա» ԲԿԾ-ի շրջանակներում դասախոսական կազմի որակավորմանը և մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները

Դասավանդողները պետք է՝
Ա/ ունենան որակավորում, որը համապատասխանում է ԲԿԾ ելքային արդյունքներին,
Բ/ տիրապետեն կրթական ծրագրի մաս կազմող այլ դասընթացներին,
Գ/ ունենան մանկավարժական որակներ:

21. Հետագա ուսման հնարավորությունները

Ազգային որակավորումների շրջանակով սահմանված 7-րդ (մագիստրոսի) մակարդակ:

<<ՄԱԹԵՄԱՏԻԿԱ>> ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԿԻՐԱՌՎՈՂ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ			
N	**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ**	**ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**	**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**
Ա.1	Ներկայացնել ՀՀ կրթության քաղաքականությունը, կրթության բնագավառի օրենսդրությունը, նորմատիվային և իրավական ակտերը, կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերը (կրթական չափորոշիչներ, ուսումնական պլաններ և ծրագրեր):	• դասախոսություն • ցուցադրություն • բացատրություն • բանավեճ • զրույց	• ընթացիկ առաջադրանքների ստուգումներ • գրավոր և բանավոր ստուգումներ • ցուցադրություններ
Ա.2	Ներկայացնել անձին որպես մանկավարժական գործընթացի սուբյեկտ, նրա հոգեբանամանկավարժական, տարիքային-անհատական առանձնահատկությունները, սոցիալականացման օրինաչափությունները, այդ գործընթացի վրա ազդող ներքին (հոգեբանական) և արտաքին (ազգային, համամարդկային, սոցիալ- մշակութային, տնտեսական) գործոնները:	• դասախոսություն • ցուցադրություն • բացատրություն • բանավեճ • զրույց	• ընթացիկ առաջադրանքների ստուգումներ • գրավոր և բանավոր ստուգումներ • ցուցադրություններ
Ա.3	Քննարկել հանրակրթական դպրոցում «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկաների բովանդակությունը և դրանց առանձնահատկությունները:	• դասախոսություն • ցուցադրություն • բացատրություն • բանավեճ • զրույց	• ընթացիկ առաջադրանքների ստուգումներ • գրավոր և բանավոր ստուգումներ • կուրսային աշխատանքի պաշտպանություն • ցուցադրություններ • ավարտական աշխատանքի պաշտպանություն
Ա.4	Մեկնաբանել հանրակրթական դպրոցում «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկաների դասավանդման մեթոդաբանական առանձնահատկությունները:	• դասախոսություն • բացատրություն • բանավեճ • սեմինար • խմբավորում • խորանարդում • զրույց	• ընթացիկ առաջադրանքների ստուգումներ • գրավոր և բանավոր ստուգումներ • կուրսային աշխատանքի պաշտպանություն • ցուցադրություններ • ավարտական աշխատանքի պաշտպանություն
Ա.5	Ձևակերպել, մեկնաբանել մանկավարժի մասնագիտության հիմնական բովանդակությունը, նպատակները, գործառույթները և այլ կառույցների հետ համագործակցության բովանդակությունը ու իրականացման ուղիները:	• դասախոսություն • բացատրություն • բանավեճ • սեմինար • խմբավորում • խորանարդում • զրույց	• ընթացիկ առաջադրանքների ստուգումներ • գրավոր և բանավոր ստուգումներ • կուրսային աշխատանքի պաշտպանություն • ցուցադրություններ • ավարտական աշխատանքի պաշտպանություն
Ա.6	Հաղորդել և ձևավորել մասնագիտական այնպիսի գիտելիքներ և կարողություններ, որոնք անհրաժեշտ են հարակից առարկաների ուսումնասիրման, հեռավար կրթության կազմակերպման և իրականացման համար:	• դասախոսություն • բացատրություն • բանավեճ • սեմինար • խմբավորում • խորանարդում	• ընթացիկ առաջադրանքների ստուգումներ • գրավոր և բանավոր ստուգումներ • կուրսային աշխատանքի պաշտպանություն

		• զրույց	• ցուցադրություններ • ավարտական աշխատանքի պաշտպանություն
N	**ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**	**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**
Բ1	Կիրառել մանկավարժության ոլորտի հիմնարար սկզբունքները և մեթոդները մաթեմատիկայի ուսուցչի գործունեության ընթացքում:	• դասախոսություն • ցուցադրություն • բացատրություն • բանավեճ • սեմինար • զրույց	• ընթացիկ առաջադրանքների ստուգումներ • թեստային առաջադրանք • գրավոր և բանավոր ստուգումներ • կուրսային աշխատանքի պաշտպանություն • ցուցադրություններ • նախագծերի արդյունքների մասին զեկուցումներ
Բ2	Կիրառել ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ, ուսուցման արդյունավետ ռազմավարություններ և մեթոդներ՝ կազմակերպելով մանկավարժական գործընթաց համընդհանուր ներառականության պայմաններում:	• դասախոսություն • ցուցադրություն • բացատրություն • բանավեճ • զրույց	• ընթացիկ առաջադրանքների ստուգումներ • թեստային առաջադրանք • գրավոր և բանավոր ստուգումներ • ցուցադրություններ
Բ3	Օգտվել տարատեսակ տեղեկատվական աղբյուրներից (գրադարաններ, համացանցային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ) և ՏՀՏ տեխնոլոգիաներից՝ դրսևորելով դրանցից օգտվելու ունակություններ, տեղեկատվական գրագիտություն (որոնել, ընտրել և մշակել անհրաժեշտ տեղեկատվություն) և մասնագիտական գործունեությունն արդյունավետ պլանավորելու, իրականացնելու և գնահատելու կարողություն:	• դասախոսություն • ցուցադրություն • բացատրություն • սեմինար • զրույց • բանավեճ	• ընթացիկ առաջադրանքների ստուգումներ • թեստային առաջադրանք • գրավոր և բանավոր ստուգումներ • կուրսային աշխատանքի պաշտպանություն • ցուցադրություններ • նախագծերի արդյունքների մասին զեկուցումներ
Բ4	Մասնագիտական խնդիրներ լուծելիս վերլուծել և համադրել տեսական գիտելիքներն ու գործնական կարողությունները, իրականացնել ինքնուրույն, հետազոտական և նախագծային աշխատանքներ, ինչպես նաև ուսուցման գործընթացում դրանց կիրառման ժամանակակից տեխնոլոգիաներ:	• դասախոսություն • ցուցադրություն • բացատրություն • մոդելավորում • բանավեճ	• ընթացիկ առաջադրանքների ստուգումներ • թեստային առաջադրանք • գրավոր և բանավոր ստուգումներ • ցուցադրություններ •կուրսային աշխատանքի պաշտպանություն • ավարտական աշխատանքի պաշտպանություն
Բ5	Կազմակերպել մանկավարժական գործընթաց՝ իրականացնելով որակական և քանակական հետազոտություններ, գնահատում դրանց արդյունքները կրթության կազմակերպման տարբեր ձևերում:	• դասախոսություն • ցուցադրություն • բացատրություն • մոդելավորում • նախագծի կառուցում • խմբավորում • խորանարդում	• ընթացիկ առաջադրանքների ստուգումներ • ռեֆերատների պաշտպանություն • գրավոր և բանավոր ստուգումներ • ցուցադրություններ, • նախագծերի արդյունքների մասին զեկուցումներ • ավարտական աշխատանքի պաշտպանություն
Բ6	Գնահատել սեփական մասնագիտական գործունեության առաջընթացը՝	• ցուցադրություն • բացատրություն	• ընթացիկ առաջադրանքների ստուգումներ

	ցուցաբերելով քննական մոտեցում և պլանավորել հետագա զարգացումը:	• բանավեճ • մոդելավորում • սեմինար • զրույց	• գրավոր և բանավոր ստուգումներ • ռեֆերատների պաշտպանություն • ցուցադրություններ • ավարտական աշխատանքի պաշտպանություն
N	**ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ (ՓՈԽԱՆՑԵԼԻ) ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**	**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**
Գ1	Կառուցել գրավոր և բանավոր խոսքը (մայրենի և օտար լեզվով)՝ դրսևորելով հոգեբանամանկավարժական պատշաճ գրագիտություն:	• դասախոսություն • ցուցադրություն • բացատրություն • բանավեճ • սեմինար	• ընթացիկ առաջադրանքների ստուգումներ • գրավոր և բանավոր ստուգումներ • թեստային առաջադրանք • ցուցադրություններ • ռեֆերատների պաշտպանություն • կուրսային աշխատանքի պաշտպանություն • ավարտական աշխատանքի պաշտպանություն
Գ2	Պլանավորել, կազմակերպել գիտամեթոդական հետազոտություններ, վերլուծել և գնահատել դրանց արդյունքները, ցուցաբերել անհրաժեշտ ինքնուրույնություն և պատասխանատվություն մասնագիտական որոշումներ կայացնելիս:	• դասախոսություն • ցուցադրություն • բացատրություն • սեմինար	• ընթացիկ առաջադրանքների ստուգումներ • թեստային առաջադրանք • գրավոր և բանավոր ստուգումներ • ցուցադրություններ • ռեֆերատների պաշտպանություն • ավարտական աշխատանքի պաշտպանություն
Գ3	Կրել պատասխանատվություն սեփական անձի առողջության, ազգային և համամարդկային արժեքների պահպանման և ներկայացման համար:	• դասախոսություն • ցուցադրություն • բացատրություն • սեմինար	• ընթացիկ առաջադրանքների ստուգումներ • գրավոր և բանավոր ստուգումներ • ռեֆերատների պաշտպանություն
Գ4	Զարգացնել մասնագիտական կոմպետենցիաները՝ ժամանակակից հասարակության կրթական պահանջմունքների, աշխատաշուկայի պահանջների, սոցիալ-տնտեսական և գիտամշակութային զարգացումներին համընթաց և պատասխանատու կերպով կիրառել սեփական գիտելիքները տարբեր ոլորտներում և ցուցաբերելու նախաձեռնություն, կառավարման կարողություններ ու գործառույթներ (պլանավորում, կազմակերպում, ղեկավարում, վերահսկում)՝ դրսևորելով ստեղծագործական մոտեցում տարբեր մարտահրավերների ժամանակ:	• դասախոսություն • ցուցադրություն • բացատրություն • բանավեճ • սեմինար • մոդելավորում • նախագծի կառուցում	• ընթացիկ առաջադրանքների ստուգումներ • թեստային առաջադրանք • գրավոր և բանավոր ստուգումներ • կուրսային և ավարտական աշխատանքի պաշտպանություն • ցուցադրություններ • նախագծերի արդյունքների մասին զեկուցումներ

	<<ՄԱԹԵՄԱՏԻԿԱ>> ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ	ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ															
		Գիտելիք և իմացություն						Գործնական մասնագիտական						Ընդհանրական (փոխանցելի)			
		1	2	3	4	5	6	1	2	3	4	5	6	1	2	3	4
1	Հայոց լեզու և գրականություն						1			2				3			
2	Հայոց պատմություն															3	
3	Օտար լեզու						1			2				3			
4	Ֆիզիկական դաստիարակություն															3	
5	Առաջին բուժօգնություն և երեխաների առողջության պահպանման հիմունքներ															3	
6	Բարձրագույն հանրահաշիվ			1	1		1	2		2	2	2	2	3	3		3
7	Մաթեմատիկական անալիզ			1	1		1	2		2	2	2	2	3	3		3
8	Ծրագրավորման լեզուներ						1			2							
9	Տարրական հանրահաշիվ և մաթեմատիկական ներածություն			1	1			2		2	2			3	3		
10	Մանկավարժություն	1	1			1	1		2			2					3
11	Հոգեբանություն		1				1					2			3		
12	Բարձրագույն երկրաչափություն			1	1		1	2		2	2	2	2	3	3		3
13	Տարրական երկրաչափություն			1	1			2		2	2			3	3		
14	ՏՀՏ հենքային դասընթաց						1			2							
15	Բնապահպանություն և շրջակա միջավայրի խնդիրներ		1													3	
16	Փիլիսոփայություն	1	1				1					2					3
17	Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա	1	1	1	1	1		2	2	2	2	2		3	3		3
18	Ներառական կրթություն	1	1		1				2							3	
19	Ֆիզիկա						1										
20	Մաթեմատիկական տրամաբանություն և ալգորիթմների տեսություն			1			1			2	2						3
21	Տարրական մաթեմատիկա և ԽԼՊ			1	1		1	2		2	2		2	3			3
22	Կուրսային աշխատանք			1	1	1		2	2	2	2			3			3
23	Մաթեմատիկական տրամաբանություն			1	1		1	2		2	2		2	3			3
24	Հավանականությունների տեսություն			1	1		1	2		2	2		2	3			3

25	Թվերի տեսություն			1			1	2		2	2						3
26	Արտակարգ իրավիճակներ և քաղաքացիական պաշտպանություն		1													3	
27	Մաթեմատիկական վիճակագրություն			1			1	2		2	2		2	3			3
28	Ընտրովի դասընթաց 1 մասնագիական			1	1		1	2		2	2		2	3			3
29	Ընտրովի դասընթաց 2 մասնագիտական			1	1		1	2		2	2		2	3			3
30	Ընտրովի դասընթաց 3 մասնագիտական			1	1		1	2		2	2		2	3			3
31	Հայկական դպրոցներում մաթեմատիկայի ուսուցման պատմություն			1	1			2		2	2			3		3	
32	Թվային համակարգեր			1			1			2	2						3
33	Մաթեմատիկայի պատմություն			1	1						2			3	3	3	
34	Մանկավարժական պրակտիկա	1	1	1	1	1	1	2	2		2	2	2	3		3	3
35	Ընտրովի դասընթաց (Տնտեսագիտություն)		1				1										
36	Ընտրովի դասընթաց (Քաղաքագիտություն)	1	1														
37	Ընտրովի դասընթաց (Խոսքի մշակույթ)						1			2				3			
38	Ընտրովի դասընթաց (Մանկավարժություն)	1	1			1	1		2			2					3
39	Ընտրովի դասընթաց (Հոգեբանություն)		1				1					2			3		
40	Ընտրովի դասընթաց (Ներառական կրթություն)	1	1		1				2							3	
41	Ընտրովի դասընթաց (Գիտական աշխատանքի տեխնոլոգիա)		1			1	1					2	2		3		3
42	Ընտրովի դասընթաց (Իրավագիտություն)	1	1														
43	Ընտրովի դասընթաց (Կրոնի տեսություն և պատմություն)		1													3	
44	Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ	1	1														3
45	Ամփոփիչ ատեստավորում		1	1	1	1	1	2	2	2	2	2		3	3		3

Հավելված 3

<<Մաթեմատիկա>> բակալավրի կրթական ծրագրի ուսումնական պլանը
ԲԿԾ առկա *ԲԿԾ* հեռակա

Հաստատված է ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի խորհրդի թիվ նիստում

Դեկան՝ _____ Գ. Դեմիրխանյան